ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

25 հոկտեմբերի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

147
(2997)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀՈՂ Է «ԳՆԵԼ» ԼԵՆԿԹԵՄՈՒՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Ալբերտ Այվազյանը Շիրակի մարզի մարզպետի տեղակալ է նշանակվել 2022 թվականին, սակայն այստեղ մի զավեշտ կա. չգիտես ինչպես՝ 1350 թվականին դեռեւս նա հողամաս է ձեռք բերել Շիրակի մարզի Առափի համայնքում:

67-ամյա համայնքապետ Ալբերտ Այվազյանը 2023 թվականի հաշվետու տարվա հայտարարագրի համաձայն՝ տարեսկզբին ունեցել է 8 անշարժ գույք՝ 1 անհատական բնակելի տուն, 7 հողամաս:

Անշարժ գույքերը ձեռք են բերվել տարբեր թվականների՝ 1350, 2000, 2018, 2019:

Թերեւս հարկ է նշել, որ փոխմարզպետը չէր կարող 1350 թվականին՝ 14-րդ դարում, ձեռք բերել հողամաս, քանի որ այդ շրջանում Հայաստանում Լենկթեմուրի արշավանքներն էին:

Հարկ է նշել, որ փոխմարզպետի շահագործման ներքո եւս 15 հողամաս կա, որոնք սեփականության իրավունքով նրան չեն պատկանում: Բոլոր հողամասերը գտնվում են Առափի համայնքում, որտեղ 1996-2021 թվականներին համայնքապետ է եղել հենց Ալբերտ Այվազյանը: Այսինքն՝ տարիներ շարունակ օգտվելով պաշտոնի ընձեռած հնարավորություններից՝ բաց չի թողել շանսը եւ հողամասեր է ձեռք բերել:

Ալբերտ Այվազյանը տրանսպորտային որեւէ միջոց չի հայտարարագրել, սակայն հիշեցնենք մի դեպք, որը սկանդալային էր եւ պտտվում էր հենց փոխմարզպետի շուրջ:

Մամուլը դեռ նախորդ տարի գրել էր, որ Շիրակի փոխմարզպետ Ալբերտ Այվազյանը երթեւեկում է սպիտակ «Լեքսուս RX 350» մեքենայով, որը պատկանում է Ախուրյան խոշորացված համայնքին: Ըստ ահազանգողի՝ փոխմարզպետն այն օգտագործում էր որպես ծառայողական մեքենա, մինչդեռ Ախուրյան համայնքի ավագանին այն տրամադրել էր «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությանը: Նշենք, որ այդ ընթացքում Ալբերտ Այվազյանը ՔՊ խմբակցության ղեկավարն էր:

Ալբերտ Այվազյանը պարզաբանել էր, որ այդ մեքենան եղել է Առափիի համայնքապետի ծառայողական մեքենան: Իսկ Առափիի համայնքապետ 31 տարի շարունակ եղել է հենց ինքը, այսինքն՝ այդ մեքենան եղել է իր ծառայողականը: Համայնքների խոշորացումից հետո այն բնականաբար անցել էր Ախուրյան խոշորացված համայնքին:

Մեքենան Այվազյանից բռնագանձել էին, ապա որոշ ջանքեր գործադրելուց հետո՝ այն վերադարձվել էր:

Ալբերտ Այվազյանի կանխիկ դրամական միջոցները կազմել են 650 հազար դրամ, իսկ տարեկան եկամուտը փոխմարզպետի համար «համեստ» թիվ է կազմել՝ 23 մլն 852 հազար դրամ:

Տարեկան եկամտից միայն գրեթե 10,5 մլն դրամն է աշխատանքի վարձատրություն Շիրակի մարզի մարզպետի աշխատակազմից. եկամտից 738 հազար դրամը կենսաթոշակ է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից, որը կազմում է ամսական գրեթե 61 հազար դրամ: 2 մլն 151 հազար դրամը ապահովագրական հատուցում է, 5 մլն 632 հազարը վարկեր են, իսկ 1 մլն 489 հազար դրամը, չգիտես, թե ինչ եկամուտ է՝ ՀՀ Կառավարությունից. նշված է՝ «այլ եկամուտների տեսակ»:

Այվազյանի հայտարարագրի՝ ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 25 մլն 390 հազար դրամ, որից 22 մլն 472 հազար դրամը բնակարանի հիփոթեքի մայր գումարն է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը արդարադատության նախարարի երկու նոր թեկնածուների է դիտարկում: Նրանք են՝ ներքին գործերի նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանը եւ «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանը. վերջինս հեղափոխությունից հետո՝ 2018-2021 թվականներին, վարչապետի աշխատակազմի այդ ժամանակվա ղեկավար Էդուարդ Աղաջանյանի տեղակալի պաշտոնն է զբաղեցրել: Նշենք, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն արդեն շուրջ մեկ ամիս է՝ չի կարողանում արդարադատության նոր նախարարի գտնել թիմի ներսից: ՔՊ Վարչությունը երկու անգամ նիստ է արել, որպեսզի նոր նախարար ընտրի, սակայն՝ ապարդյուն, բոլոր թեկնածուներին մերժել է՝ կարողությունների բացակայության պատճառով: Նախարարի հիմնական թեկնածուները ՔՊ խմբակցության պատգամավորներ Արփի Դավոյանը եւ Արմեն Խաչատրյանն են եղել, որոնց լոբբինգով զբաղվել է ՔՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը: ՔՊ վարչությունը, սակայն, մերժել էր երկու թեկնածուներին էլ: Հիմա, փաստորեն, ՔՊ-ն նախարար է փնտրում կուսակցությունից դուրս, որպեսզի պրոֆեսիոնալների գտնի:

Դաջորդ շաբաթ գործադիրը, Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, կգնա խորհրդարան: Երկուշաբթի օրը Նիկոլ Փաշինյանը ԱԺ հանձնաժողովների համատեղ նիստում կներկայացնի 2025 թվականի բյուջեի նախագիծը: Այնուհետեւ նախարարները, ուժային կառույցների եւ իրավապահ համակարգի ղեկավարները կներկայացնեն ոլորտային համակարգի բյուջեի նախագիծը: Նախագծի քննարկումը կտեւի մինչեւ նոյեմբերի 5-ը, դրանից հետո կներկայացվեն գրավոր առաջարկներ, իսկ արդեն նոյեմբերի 12-ից բյուջեի նախագիծը կքննարկվի նաեւ ԱԺ լիագումար նիստերի ժամանակ: Նշենք, որ սեպտեմբերին՝ Կառավարությունում խորհրդակցության ժամանակ, արդեն իսկ ներկայացվել է 2025 թվականի պետական բյուջեի նախագիծը:



Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կարծես թե, հ/կ չէ, եւ կոռուպցիոն դեպքեր հայտնաբերելու համար ստանում է մեր հարկերից գոյացած աշխատավարձը... Ինչեւէ՝ անիմաստ հարցադրում: Ուսումնասիրելով ԱԺ պատգամավոր Մարիամ Պողոսյանի հետ համատեղ բնակվող Աշոտ Պողոսյանի՝ նրա հոր հայտարարագիրը՝ փորձում ենք կանխարգելել կոռուպցիան. Աշոտ Պողոսյանը 2021 թվականին հայտարարագրել է «զրո դրամ» եկամուտ եւ դրամական միջոց, որը իրատեսական է, քանզի նա երկար տարիներ է, ինչ չի աշխատում: Պողոսյանն ընդդիմադիր է՝ «Հայաստանի առաջադիմական միացյալ կոմկուս»-ի ակտիվ անդամ, սակայն կոմունիստ Աշոտ Պողոսյանը 2022 թվականին միանձնյա ռեժիմով ձեռք է բերել 29.3 միլիոն դրամով բնակարան Երեւանի Կենտրոն վարչական շրջանում: Հավելենք, որ Աշոտ Պողոսյանը 2023 թվականից է սկսել հայտարարագրել ունեցվածքը եւ որեւէ եկամուտ չի ունեցել՝ միայն չնչին կենսաթոշակ: ՔՊ-ի հետ նիկոլական, կոմունիստների հետ կոմունիստ, այսպես, կոմպլեմենտար եղանակով Մարիամ Պողոսյանը ընտանիքի հետ «թավշյա հեղափոխության» շնորհիվ սկսել է իր կարիերայի վերելքը: Պատգամավորի օգնականից՝ պատգամավոր:

ԶՐՈՒՅՑ

ՓՈՓԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՆԱՇՆՈՐՀՆ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՆ

Նոյեմբերի 1-ից հասարակական տրանսպորտից օգտվելու համար պարտադիր պայման է լինելու կա՛մ 100 դրամանոց մետաղադրամի առկայությունը, կա՛մ ՔյուԱր կոդի առկայությունը, որով հնարավոր կլինի վճարում իրականացնել:

Իհարկե, այս ամենը հասարակական տրանսպորտից օգտվող անձանց լիարժեք գոհունակությանը չի արժանացել, քանի որ, շատերի կարծիքով, այս ամենը խառնաշփոթ է առաջացնելու, անգամ՝ հերթեր, ինչպիսիք, օրինակ, եղան մետրոյում ժետոնների փոխարինումից հետո:

Այս թեմայի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Լուսավոր Հայաստան» կուսակցության փոխնախագահ Դավիթ Խաժակյանի հետ:

-100 դրամանոցով կամ ՔյուԱր կոդով երթեւեկելը կբարելավի՞ տրանսպորտային համակարգը: Ի՞նչ կտա այդ փոփոխությունը:

-Այս որոշման պատճառն այն է, որ քաղաքապետարանը ստեղծել է նոր մոնոպոլիա այն վճարահաշվարկային կազմակերպության համար, որը պետք է սպասարկի տրանսպորտային համակարգի վճարումները, եւ այսքան ժամանակ մարդիկ հրաժարվել են օգտվել այդ ՔյուԱր կոդերից, այն է թե՝ գնել տվյալ կազմակերպությունից: Հիմա, քանի որ այդ կազմակերպության մուտքերը, ըստ ամենայնի, չեն ապահովվել այնքանով որքանով քաղաքապետարանը կամ առանձին պաշտոնյաներ ակնկալում էին, որոշում է կայացվել այնպես անել, որ ավելացվեն այդ մուտքերը: Մետրոյում առաջին քայլով ժետոնները հանեցին՝ թողնելով, որ մարդիկ ստիպված լինեն գնալ եւ այդ ՔյուԱրով ձեռք բերել տոմս, հիմա նմանատիպ քայլ իրականացնում են ավտոբուսների համար: Սա է այդ մոնոպոլիան, որովհետեւ այլ կազմակերպությունից, փաստացի, տրանսպորտի տոմս գնել հնարավոր չի լինելու: Բնականաբար, սա տրանսպորտի բարելավման կամ միասնական տոմսային համակարգի ներդրման համար չէ:

-ՔյուԱր կոդով երթեւեկելը դժվարություն չի՞ առաջացնի մեծահասակների համար:

-Ես կարծում եմ՝ ՔյուԱր կոդից օգտվելը խնդիր կառաջացնի, բայց, եկեք նկատի ունենանք հետեւյալը. երբ մրցույթը կայանում էր այդ միասնական տոմսային համակարգի, ՔյուԱրը ընդամենը տարբերակներից մեկն էր, պետք է լիներ քարտային համակարգ: Առ այս պահը մյուս մնացյալ կետերը, որոնք մրցույթի պարտադիր պայման էին, չեն իրականացվել, պայմանագրի ժամկետները խախտված են: Քաղաքապետարանի պաշտոնյաները պարզապես աչք են փակում այդ հանգամանքի վրա՝ տպավորություն ստեղծելով, թե ի սկզբանե միայն ՔյուԱրը պետք է լիներ, ինչն այդպես չէ: Բայց, քանի որ ՔյուԱրն էլ իր հերթին ձախողվեց եւ մարդիկ սկսեցին չօգտագործել, հիմա ասում են՝ 100 դրամանոց ունեցեք, կամ ՔյուԱր ձեռք բերեք, ինչը, իհարկե, աբսուրդի ժանրից է:

-Ընդհանուր առմամբ ի՞նչ է պետք անել տրանսպորտային համակարգի իրավիճակը ավելի լավը դարձնելու համար, որ այն չվատթարանա:

-Անհրաժեշտ է սպասարկող կազմակերպության օպերատորի ներգրավում, ինչը հիմա իրականացնում է «Երեւան ավտոբուս» ՓԲԸ-ն, ակնհայտորեն իրականացնում է ոչ բարվոք իրավիճակում, իսկ եթե խոսում ենք հենց միասնական տոմսային համակարգի մասին, ապա պետք է ասենք, որ գործող պայմանագիրը եւ այն, ինչը մատուցում է շահած կազմակերպությունը, իրարից շատ հեռու են, եւ ցանկացած այլ նորմալ դեպքում սա պետք է արժանանար քաղաքապետարանի կողմից պայմանագրի լուծման, իսկ դա տեղի չունենալու դեպքում՝ պետք է հետաքրքրվեին, թե ինչու է քաղաքապետարանը աչք փակում մրցույթով նախատեսված պայմանների չիրականացմանը:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ԸՆԹԱՑԻԿ

ԻՋԵՎԱՆՈՒՄ ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՓՈՂՈՑ ԿԱ

Այսօր Իջեւանի համայնքապետարանը հաղորդագրություն տարածեց, որ մի շարք փողոցներում ճանապարհների սալարկման աշխատանքներ են տարվում: Այդ փողոցների թվում էր նաեւ «Հայկ Ղալումյան» փողոցը, ինչը համացանցում քննարկումների առիթ էր դարձել թե՝ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի անունով է կոչվում փողոցը:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Հայկ Ղալումյանի հետ՝ հասկանալու, թե ինչ առնչություն ունի փողոցն իր հետ, արդյոք հենց իր անվամբ է կոչվել այն:

Հայկ Ղալումյանն էլ ասաց, որ փողոցն իր ազգականի անվամբ է կոչվում «Հայկ Ղալումյան», որը ոստիկան է եղել:

«Տարիներ առաջ ոստիկան Հայկ Ղալումյանը հանցագործին վնասազերծելիս զոհվել է: Այդ հանցագործը նռնակ է փորձել նետել կնոջ ու երեխայի վրա, այդ պահին ոստիկանը պաշտպանել է կնոջն ու երեխային, որպեսզի նռնակը չդիպչի նրանց, արդյունքում ինքը զոհվել է: Իջեւանի այդ փողոցն էլ իր անվամբ է կոչվում», - ասաց մարզպետ Հայկ Ղալումյանը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՎՍՏԱՀ Է՝ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՀԵՏ ԿՏԱՆ

Հայաստանի խորհրդարանը երեկ վավերացարեց Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման կանոնակարգը:

Քվեարկությանը մասնակցել եւ 67 ձայնով կողմ է քվեարկել միայն «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը:

ԱԺ ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորները չեն մասնակցել կանոնակարգի քննարկմանն ու քվեարկությանը:

Ըստ այս փաստաթղթի՝ Երեւանն ու Բաքուն համաձայնել են սահմանազատումն իրականացնել 1991 թվականի Ալմա-Աթայի հռչակագրի վրա, բայց այդ համաձայնությունը վերջնական չէ: Կանոնակարգում նշվում է՝ գործընթացը հնարավոր է հետագայում՝ խաղաղության համաձայնագրի ընդունումից հետո, այլ սկզբունքներով ընթանա:

Կանոնակարգը 7 հոդված ունի, հիմնականում գործընթացին վերաբերող տեխնիկական տվյալներ են, ընդհանրական ձեւակերպումներ:

Երեկ ԱԺ-ում կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ Նիկոլ Փաշինյանը խոստովանեց, որ սահմանազատման գործընթացում տեսնում է ռիսկեր, սակայն հավելեց, որ գործընթացի բացակայության ռիսկերը հազարապատիկ ավելի է համարում:

Նիկոլ Փաշինյանը երեկ նաեւ հայտարարեց, որ Հայաստանի ինքնիշխան տարածքի ավելի քան 200 քառ. կմ օկուպացված է, բայց վստահ է՝ սահմանազատման միջոցով հնարավոր է այս տարածքը հետ բերել:

Մինչ Հայաստանը վավերացնում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման կանոնակարգը, Ադրբեջանում դեռեւս քար լռություն է, անգամ քննարկումներ չկան այս մասով:

Ըստ էության՝ միակողմանի գործընթաց է տեղի ունենում, իսկ Ադրբեջանի չվավերացնելու դեպքում՝ փաստաթուղթն առ ոչինչ է:

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները, սակայն, դրական են տրամադրված, վստահ են՝ Ադրբեջանը կվավերացնի փաստաթուղթը:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԿԱԼԱՆՔԻ ԺԱՄԿԵՏՆ ԱՆՓՈՓՈԽ Է ՄՆԱՑԵԼ

Արցախի նախկին պետնախարար, բարերատ Ռուբեն Վարդանյանի կալանքի ժամկետը չի փոխվի: Բաքվի դատարանն անհիմն է որակել եւ մերժել նրա փաստաբանների բողոքը:

Այսպիսով՝ դատարանն անփոփոխ է թողել հոկտեմբերի 18-ի վճիռը, որով Վարդանյանի կալանքի ժամկետը երկարաձգվել էր: Նա կալանքի տակ է պահվում արդեն ավելի քան 1 տարի:

Բաքվի Սաբայիլի դատարանը հոկտեմբերի 18-ին երկարաձգել էր Ռուբեն Վարդանյանի կալանքի ժամկետը:

Արդեն մեկ տարուց ավելի է, ինչ շինծու մեղադրանքներով եւ ապօրինի կերպով Բաքվի բանտում է պահվում 23 հայ գերի: Պահվող անձանց թվում են նաեւ Լեռնային Ղարաբաղի նախկին նախագահները՝ Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանը, Արայիկ Հարությունյանը, ինչպես նաեւ ԼՂ նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը, ԱԺ նախագահի պաշտոնը զբաղեցրած Դավիթ Իշխանյանը, պաշտպանության բանակի նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը, ԱԳ նախկին նախարար Դավիթ Բաբայանը, ՊԲ նախարարի նախկին տեղակալ Դավիթ Մանուկյանը, որոնց Ադրբեջանն ապօրինի ձերբակալել եւ կեղծ մեղադրանքներ է առաջադրել 2023 թվականի սեպտեմբերին՝ Լեռնային Ղարաբաղի դեմ ռազմական ագրեսիայից հետո:

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆԸ՝ ԿԱԴՐԵՐԻ ՍՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանին լրագրողները հարց ուղղեցին արդարադատության նախարարի պաշտոնում թեկնածուների առկայության վերաբերյալ: Հարցին ի պատասխան՝ արդյոք կադրային սղության խնդի՞ր կա, Պապոյանը նշեց. «Կադրային սղության խնդիր միշտ կա, բայց նաեւ կան բազմաթիվ գործընկերներ, որոնք շատ լավ նախարար կարող են լինել, բայց իրենց վերցրած պատասխանատվությունը համարեցին, որ ավելի լավ է տանել մինչեւ 2026 թ.: Քաղաքական թիմից կունենանք, գուցե ոչ կուսակցության անդամ, այլ ավելի լայն առումով թիմից»:

Պապոյանը միաժամանակ նշեց, որ անուններ չի քննարկի: Նախարարը նշեց, թե կառավարությունում՝ գործադիրում, աշխատանքն իր ծանրաբեռնվածությամբ ու պատասխանատվությամբ ավելի դժվար է, բայց միաժամանակ ավելի հետաքրքիր:

ԱՆԻՖ-ին վերաբերող հարցերի մասին Պապոյանը նշեց՝ քանի որ հիմնարկը նախարարության ենթակայության տակ չէ, լուծարման գործընթացի մեջ է, չի կարող պահանջվող խորության դետալներին տիրապետել:

ԻՐԱՎԻՃԱԿ

«ՔԱՄԱԼԱ ՀԱՐՐԻՍԸ ՈՉԻՆՉ ՉԱՐԵՑ...». ԹՐԱՄՓ

Դոնալդ Թրամփը Truth Social սոցիալական ցանցի իր էջում արված գրառմամբ անդրադարձել է ԼՂ-ից հայերի բռնի տեղահանությանը եւ հայ-ադրբեջանական հարաբերություններին:

«Քամալա Հարրիսը ոչինչ չարեց, երբ 120 հազար քրիստոնյա հայերը դաժանաբար պատժվեցին ու բռնությամբ տեղահանվեցին Արցախից: Քրիստոնյաները ամբողջ աշխարհում ապահով չեն լինի, եթե Քամալա Հարրիսը լինի Միացյալ Նահանգների նախագահը: Երբ ես նախագահ լինեմ, ես կպաշտպանեմ հալածված քրիստոնյաներին, կաշխատեմ դադարեցնել բռնությունն ու էթնիկ զտումները, եւ մենք կվերականգնենք խաղաղությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ», - գրել է Թրամփը:

ԱՌԱՆՑ ՄԻՆՄԿԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՉԻ ՕԳՏԱԳՈՐԾՎԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԶԵՆՔԸ

Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն հայտարարել է, որ իր ռուս գործընկեր Վլադիմիր Պուտինը երբեք առանց իր համաձայնության չի օգտագործի Բելառուսի ունեցած միջուկային զենքը:

Այս մասին հայտնում է Belta գործակալությունը՝հղում անելով Լուկաշենկոյի՝ բրիտանական հեռուստատեսությանը տված հարցազրույցին:

«Պուտինը երբեք չի օգտագործի այն զենքը, որը ներկայումս տեղակայված է Բելառուսի տարածքում՝ առանց Բելառուսի նախագահի համաձայնության, դուք պետք է հստակ հասկանաք եւ պատկերացնեք դա», - ասել է Լուկաշենկոն:

Նրա խոսքով՝ միեւնույն ժամանակ, եթե խոսվեր երկիրը պաշտպանելու համար միջուկային զենքի կիրառման մասին, ապա Բելառուսն այդ հարցով կխորհրդակցեր Ռուսաստանի հետ:

Բելառուսի նախագահը նաեւ ընդգծել է, որ միջուկային զենքը վախեցնելու գործիք չէ, այլ հզոր զսպող միջոց, եւ անհրաժեշտության դեպքում ինքը պատրաստ կլինի օգտագործել այն:

ՓՈԹՈՐԻԿՆԵՐԻՑ ՀԵՏՈ ՄԱՀԱԲԵՐ ՄԱՆՐԷ Է ՏԱՐԱԾՎԵԼ

ԱՄՆ-ի Ֆլորիդա նահանգում աշնանը մոլեգնող «Հելեն» եւ «Միլթոն» փոթորիկներից հետո Vibrio vulnificus անվամբ մահաբեր մանրէով վարակման դեպքերի կտրուկ աճ է գրանցվել: Արդեն մահացել է 13 մարդ:

Այս մասին հաղորդում է նահանգի առողջապահության նախարարությունը:

Նշվում է, որ Ֆլորիդայում փոթորիկներից առաջացած տաք հեղեղաջրերը հիանալի միջավայր են դարձել բազմազան վտանգավոր մանրէների բազմացման համար:

Ֆլորիդայի առողջապահության նախարարության տվյալներով՝ նահանգում Vibrio vulnificus մանրէով վարակվել է առնվազն 74 մարդ:

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ԻՆՉՊԵՍ ՔՊ-Ն ՊԱՏԵՐԱԶՄ ՀԱՅՏԱՐԱՐԵՑ ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԴԵՄ

Սիսիանի ավագանին երեկ նոր քաղաքապետ է ընտրել:

Սիսիան համայնքի ավագանին 14 կողմ ձայնով համայնքապետ է ընտրել Հովսեփ Առաքելյանին, վերջինս Սիսիանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ է:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՔՊ վարչության նիստում են որոշել, որ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետ Արմեն Հակոբջանյանը պետք է հրաժարական ներկայացնի: Քաղաքական իշխանությունը բացահայտել է, որ ՔՊական քաղաքապետը հայրենի ընդդիմության հետ սերտ կապերի մեջ է եղել:

Հակոբջանյանի հրաժարականի հարցը բարձրաձայնել է նույն մարզի ՔՊ-ական պատգամավոր Կարեն Համբարձումյանը:

Արմեն Հակոբջանյանը Սիսիանի նախկին քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի եղբորորդին է: Փաստորեն, Նիկոլ Փաշինյանը նախկինում քրեական գործերով անցնող Սիսիանի նախկին քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի եղբորորդուն նշանակել էր համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար:

Արմեն Հակոբջանյանի հրաժարականից հետո համայնքապետի պաշտոնում առաջադրվել էր խմբակցության անդամ Հովսեփ Առաքելյանը:

Հաշվի առնելով, որ ՔՊ-ն ունի ավագանու 13 անդամ՝ ստացվում է, որ Առաքելյանի ստացած 14 ձայներից մեկը ավագանու ընդդիմադիր անդամների կողմից է:

Սիսիանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամներն ավելի վաղ բոյկոտել էին սեպտեմբերի 13-ին նշանակված ավագանու նիստը, որին միայն արդեն նախկին համայնքապետ Արմեն Հակոբջանյանն էր մասնակցել: Հեռացել է ոչ միայն Արմեն Հակոբջանյանը, այլ նաեւ հեռացել են նրա երկու տեղակալները՝ Կարեն Հովհաննիսյանը եւ Գարիկ Հակոբյանը: Արմեն Հակոբջանյանն ու Կարեն Հովհաննիսյանը նաեւ ավագանու մանդատներից են հրաժարվել, իսկ Գարիկ Հակոբյանը ավագանու անդամ չէր: Վերջինս աշխատում է «Ջերմուկ Ինթերնեյշնլ ՊԵՊՍԻ-ԿՈԼԱ»-ում՝ որպես շուկայի զարգացման պատասխանատու (Հովսեփ Առաքելյանի պաշտոնը այսպես է գրանցված ԿԸՀ-ի կայքում): Հովսեփ Առաքելյանը նաեւ Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Կարեն Իվանյանի քրոջ որդին է:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՕՐԵՆՔԸ

Ազգային ժողովն ընդունել է «Ոստիկանության գվարդիայի մասին» եւ կից մի շարք օրենքներում նոր կարգավորումներ նախատեսող օրենսդրական փաթեթը:

Նախագծին կողմ է քվեարկել 65 պատգամավոր, դեմ՝ 28:

Ոստիկանության գվարդիայի ձեւավորման համար օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետ է սահմանվել 2025 թվականի նոյեմբերի 1-ը: Մինչ այդ օրենսդրական որոշ կարգավորումներ ուժի մեջ կմտնեն՝ ենթաօրենսդրական դաշտը նոր կարգավորումներին ներդաշնակեցնելու համար:

Հայաստանի ներքին գործերի փոխնախարար Արփինե Սարգսյանի խոսքով՝ առաջին անգամ Հայաստանում կարգավորվելու են ուժային միջոցների գործադրման չափորոշչի ներմուծման հետ կապված հարցերը, մինչ այժմ չափորոշչի որեւէ մոտեցում չի եղել:

2025 թվականի նոյեմբերի 1-ից ուժը կորցրած կճանաչվի «Ոստիկանության զորքերի մասին» 1997 թվականին ընդունված օրենքը: Փոփոխություն է կատարվել ռազմական դրության ժամանակ ոստիկանության գվարդիայի առջեւ դրվող խնդիրների մասով. անհրաժեշտության դեպքում ոստիկանության գվարդիան ռազմական դրություն հայտարարված տարածքում իրականացվող պատերազմական գործողությունների շրջանակում հատուկ առաջադրանքներ եւս կարող է ստանալ ու կատարել:

Նշվել է, որ պահպանվել է հրամանատարական այն շղթան, ինչը ոստիկանության տարբեր կառուցվածքային միավորների շրջանակում է: Մինչ օրենքն ուժի մեջ մտնելը համակարգում լայնածավալ վերապատրաստումներ են իրականացվելու:

ՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԽՍՏԱՑՎԻ

Հայաստան միգրացիոն հոսքերի կանոնակարգման եւ անօրինական միգրացիոն հոսքերի կանխարգելման նպատակով կխստացվի Հնդկաստանի, Իրաքի եւ Եգիպտոսի քաղաքացիների համար մուտք գործելու ընթացակարգը:

Ըստ որոշման հիմնավորումների՝ 2024 թ. հունվարի 1-ից մինչեւ օգոստոսի 28-ն ընկած ժամանակահատվածում Հայաստան են ժամանել եւ ներկայում ՀՀ-ում անօրինական բնակվում են Հնդկաստանի 11 965, Եգիպտոսի 658 եւ Իրաքի 255 քաղաքացի:

«Առաջարկվում է այս երկրների քաղաքացիներին էլեկտրոնային վիզաներ տրամադրել ԱՄՆ-ի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Կորեայի, Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Կանադայի, Ռուսաստանի, Ճապոնիայի, Եվրամիության, Շենգենյան համաձայնագրի երկրների եւ Պարսից ծոցի համագործակցության խորհրդի երկրների ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակի (կամ վավեր մուտքի վիզայի) առկայության պարագայում: Նշված երկրների քաղաքացիներին վիզա կտրամադրվի նաեւ վերադարձով ինքնաթիռի տոմսի առկայության դեպքում»,- նշված է որոշման հիմնավորման մեջ:

ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ՈՒ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

Կազանում տեղի է ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումն Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մասուդ Փեզեշքիանի հետ:

Վարչապետը գոհունակություն է հայտնել Իրանի հետ հարաբերությունների դինամիկ բնույթից եւ ընդգծել, որ նախագահ Փեզեշքիանի պաշտոնը ստանձնելուց ի վեր այդ դինամիկան ոչ միայն պահպանվում է, այլ նաեւ զարգանում: Նիկոլ Փաշինյանն ընդգծել է, որ Իրանի հետ հարաբերությունների հետագա զարգացումը ՀՀ կառավարության համար առաջնահերթություններից է:

Իրանի նախագահը կարեւորել է Հայաստանի հետ փոխգործակցության շարունակական զարգացումն ու ընդլայնումը, այդ թվում՝ տնտեսության, մշակույթի ոլորտներում: Մասուդ Փեզեշքիանն ընդգծել է, որ իր երկրի առաջնահերթությունն է զարգացնել հարաբերությունները հարեւան եւ բարեկամ պետությունների հետ՝ հավելելով, որ Հայաստանն այդ երկրներից մեկն է:

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՂԲՈՐԸ ՆԱՄԱԿ ԵՆ ՈՒՂԱՐԿԵԼ

ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ՝ ՊԱՅԹՅՈՒՆԻ ԳՈՐԾՈՎ

ԱԺ ՔՊ պատգամավոր Հայկ Սարգսյանի եղբորը՝ Նաիրի Սարգսյանին, կանչել են ՀՀ քննչական կոմիտե ու հարցաքննել: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ հարցաքննությունը կապված է եղել նրանց հոր՝ ավտոմեքենաների յուղման կետի մոտ տեղի ունեցած պայթյունի քրեական վարույթով. սակայն սա վերջը չէ:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ենթադրյալ պայթյուն իրականացնողը նամակ է ուղարկել Նիկոլ Փաշինյանի նախկին օգնական Նաիրի Սարգսյանին (մեջբերում)՝ «Հերդ վնաս ա տվել իմ ընտանիքին, էլի եք տրաքելու»:





Իսկ հիմա ամեն ինչի մասին՝ ամենասկզբից. 2022 թվականի օոգոստոսի 31-ին Երեւանում ուժգին պայթյուն է տեղի ունեցել ԱԺ ՔՊ պատգամավոր Հայկ Սարգսյանի հորը պատկանող ավտոպահեստամասերի խանութ-յուղման կետում:

««Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանի հայրը՝ Զարեհ Սարգսյանը, իրավապահներին բացատրություն է տվել Արաբկիրում տեղի ունեցած պայթյունի գործով: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ նա իրավապահներին հայտնել է, որ չի կարող ասել՝ արդյոք կատարվածն իրենց հետ կապ ունի, թե ոչ: «Թող իրավապահները պարզեն», - ասել է Զարեհ Սարգսյանը: Նկատենք, որ պայթյունը եղել էր Սարգսյանին պատկանող՝ Երեւանի Նաիրի Զարյան փողոցում գտնվող խանութ-յուղման կետի տարածքում: Այդ տարածքից փոքր-ինչ հեռավորության վրա է գտնվում պատգամավորի հայրական տունը, ու համադրելով բոլոր հանգամանքները՝ հարց է առաջանում՝ պայթյունն ուղղակի պատահականությո՞ւն է եղել, թե՞ ՔՊ-ական պատգամավորի դեմ է ուղղված. գուցե մարդիկ կան, որոնք փորձել են ինչ-որ բան հասկացնել պատգամավորին կամ նրա ընտանիքի անդամներից որեւէ մեկին: Բոլոր հանգամանքները, հուսանք, իրավապահները կպարզեն:

«Շուրջ 2 տարի անց ՔՊ պատգամավոր Հայկ Սարգսյանի ընտանիքին պատկանող խանութի տարածքում պայթյուն իրականացրած ենթադրյալ հանցագործին բացահայտել են, բայց գտնվելու վայրը չգիտեն ու հետախուզում են: Դատելով իրավիճակից՝ հետախուզվող անձը հենց Ռուբեն Կասյանն է, քանի որ Armlur.am-ի ձեռքում է հայտնվել ՀՀ քնչական կոմիտեում առկա մի փաստաթուղթ, որտեղ ՔՊ խմբակցության պատգամավոր Հայկ ու Նաիրի Սարգսյանների հորը՝ Զարեհ Սարգսյանին պատկանող, Երեւան քաղաքի Ն. Զարյան փողոցում գործող ավտոմեքենաների յուղման կետի մոտ տեղի ունեցած պայթյունից հետո ենթադրյալ հանցագործ Ռուբեն Կասյանը նամակ է ուղարկում Նիկոլ Փաշինյանի նախկին օգնական Նաիրի Սարգսյանին (Տե՛ս պատճենված երկխոսությունը):

Եվ ահա, նկատենք, որ ենթադրյալ հանցագործին իրավապահները դեռ փնտրում են, իսկ ահա ՔՊ պատգամավորի եղբայրը հրավիրվել է քննչական կոմիտե ու հարցաքննվել է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ 4 ՏԱՐԻ ԱՆՑ

44-օրյա պատերազմից 4 տարի անց իրավապահները շարունակում են պատասխանատվության կանչել պատերազմը լքած ժամկետային զինծառայողներին:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝Լեւոն Արամայիսի Առաքելյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, հանդիսանալով Արցախի Հանրապետության զորամասի ժամկետային զինծառայող եւ ժամանակավորապես տեղակայված լինելով ՀՀ ՊՆ Ն զորամասում, ՀՀ կառավարության 27.09.2020թ. թիվ 1586-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության ժամանակ՝ 2021 թվականի փետրվարի 24-ին՝ ժամը 09:00-ի սահմաններում, ինքնակամ թողել է զորամասը եւ վերադարձել է միայն փետրվարի 27-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում՝ ծառայությունից բացակայելով 72 ժամից ավելի, բայց 240 ժամից ոչ ավելի տեւողությամբ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հոկտեմբերի 23-ից 24-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 97 դեպք, որոնցից 3-ը՝նախկինում կատարված:

Մասնավորապես՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու՝ 34, թմրանյութի հայտնաբերման՝ 17, անձնական ունեցվածքի գողության՝ 7, մարմնական վնասվածք պատճառելու եւ խարդախության ՝5-ական, ֆիզիկական ներգործության՝ 4, հոգեկան ներգործության՝ 3, վստահված գույքի հափշտակման, գույքը ոչնչացնելու կամ վնասելու, պաշտոնեական կեղծիքի կամ անփութության ու պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից կամ զորահավաքային զորակոչից խուսափելու՝ 2-ական, բնակարանային գողության, շորթման, դրամանենգության, խուլիգանության, կաշառակերության, պաշտոնատար անձի ծառայողական գործունեությանը միջամտելու, տրանսպորտային միջոցի կամ հրազենի նույնականացման տարրերը կեղծելու կամ ջնջելու, աշխատանքային պաշտպանության կանոնները խախտելու, հետամտելու, անառակաբարո արարք կատարելու եւ պոռնկագրական նյութեր կամ առարկաներ պատրաստելու, տարածելու կամ պահպանելու՝1-ական դեպք:

Նախկինում կատարված հանցագործության դեպքերից բացահայտվել է այլ հանցագործության՝ 2, բնակարանային գողության՝1 դեպք:

Հայտնաբերվել է 2 հետախուզվող, կամավոր ներկայացել՝6-ը:

Հայտնաբերվել է 1 անհետ կորած:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 1 դեպք:

Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 16 պատահար. 2 մարդ զոհվել է, 21-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆԸ ՀՐԱՎԻՐՎԵԼ Է ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում իրավաբան Գագիկ Ղազինյանին պատկանող գույքի առնչությամբ իրականացվում է ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է ամփոփագիր: Ղազինյանը եւ նրա ընտանիքի անդամներից եւս 2-ը հրավիրվել են դատախազություն:

«Դուք իրավունք ունեք սույն ծանուցագիրը ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում ներկայանալ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն՝ ծանոթանալու գործի նյութերին, ներկայացնելու դիրքորոշում, ինչպես նաեւ հայտարարագիր»,-նշված է հաղորդագրության մեջ:

ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ

ՆԳՆ ոստիկանության Շիրակի մարզային վարչության ծառայողները Կումայրու բաժնի գործընկերների հետ իրացնելով ստացված տեղեկությունները՝ ապօրինի թմրանյութ ձեռք բերելու, պահելու, պատրաստելու եւ օգտագործելու կասկածանքով Գյումրու Լալայան փողոցում ձերբակալել եւ Կումայրիի բաժին են տեղափոխել 61-ամյա մի տղամարդու:

Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել են 3,72 գրամ շագանակագույն, յուրահատուկ հոտով զանգված եւ 59 գրամից ավելի քաշով դեղնականաչավուն զանգված:

Տղամարդը հայտնել է, որ հայտնաբերվածը թմրամիջոց է, պատրաստել է կանեփի թփերից՝ անձնական օգտագործման համար:

ՆԳՆ ոստիկանության Շիրակի մարզային վարչության քրեական հետախույզները տեղեկություն էին ստացել, որ Կապս գյուղի բնակիչ 47-ամյա տղամարդը տնամերձ հողամասում եւ օժանդակ շինություններում աճեցնում է կանեփ, նաեւ պատրաստում եւ օգտագործում է թմրամիջոց:

Ոստիկաններն այցելել են նշված հասցե, որտեղ տղամարդը ներկայացրել է յուրահատուկ հոտով, 48 գրամից ավելի զանգված: Նա հայտնել է, որ զանգվածը մարիխուանա է՝ անձնական օգտագործման համար: Տղամարդը տան բակից ոստիկաններին է ներկայացրել նաեւ պոլիէթիլենային տոպրակ՝ 68 գրամից ավելի քաշով կանաչավուն կիսաչոր զանգվածով: Նա ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Ախուրյանի բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հոկտեմբերի 23-ից 24-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 97 դեպք, որից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԳՆԻ ԿԵՍԻ ՉԱՓՈՎ՝ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը հոկտեմբերի 14-ին որոշում է ընդունել 2024 թվականի մայիսի 25-26-ին տեղացած հորդ անձրեւներից առաջացած հեղեղումներից առաջացած արտակարգ իրավիճակի հետեւանքով աղետի գոտում ֆիզիկական անձանց տրանսպորտային միջոցներին պատճառված վնասների համար տրամադրել 29 միլիոն 201 հազար ՀՀ դրամ ֆինանսական աջակցության՝ ըստ հավելվածի: Սակայն որոշման հավելվածը Տավուշի մարզպետարանը չի հրապարակել, հայտնի չէ, թե այդ 29 միլիոնը ջրհեղեղից տուժած քանի տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ եւ որքան չափով է տրվել: Եթե ջրհեղեղից տուժած տրանսպորտային միջոցների տերերին տրված գումարը պատճառված վնասին համարժեք լիներ, մարզպետի որոշման մեջ գրված կլիներ՝ ֆինանսական փոխհատուցում, ոչ թե աջակցություն:

Կառավարությունը պետական բյուջեից մեկ միլիարդից ավելի դրամ է հատկացրել պաշտոնյաների համար ծառայողական շքեղ՝ 50, այդ թվում՝ 110 հազար դոլարանոց ավտոմեքենա գնելու համար, սակայն ջրհեղեղից տուժած տրանսպորտային միջոցների տերերին որպես ֆինանսական աջակցություն ընդհանուր հատկացրել է ընդամենը 29 միլիոն դրամ:

ԱՊՕՐԻՆԻ ՀԱՏՎԱԾ ՎԱՌԵԼԱՓԱՅՏ

Իջեւան համայնքի Գանձաքար, Սեւքար, Ենոքավան եւ այլ գյուղերի բնակիչներից տեղեկացանք, որ նրանք առաջիկա ձմռանը տները ջեռուցելու համար վառելափայտը փայտ վաճառողներից գնում են խորանարդ մետրը 15 հազար դրամով: Այդ գնի մեջ ներառված է նաեւ «մետրովկա» հատված վառելափայտի տեղափոխումը գյուղացու առանձնատան բակ: Գյուղացիներն ասացին, որ իրենք գնում են անտառապահների կամ նրանց մերձավոր ընկերների տրամադրած վառելափայտը, որի դիմաց որեւէ անդորրագիր չի տրամադրվում: Ներդրվել է անտառային պարեկների համակարգը, սակայն դրանից անտառների պահպանությունը չի բարելավվել:

Իջեւանում փայտի բիզնեսով զբաղվում են իշխանության կողմից հովանավորվողները: Իջեւան համայնքի բնակիչները կարծում են, որ Տավուշի մարզի անտառամերձ բնակավայրերի ընտանիքներին անտառում անվճար տրվող, ինքնապատրաստումով թափուկ վառելափայտի տնօրինման թույլտվության նախկին տարիների կարգը փոփոխեը, թափուկ պատրաստելու թույլտվությունը միայն ընտանեկան ու սոցիալական նպաստ ստացող ընտանիքներին տրամադրելը նպատակ ունի նպաստելու իշխանության հովանու ներքո գտնվող, փայտի անօրինական բիզնես անողների շահույթների ավելացմանը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԿԱՐԵՎՈՐՎՈՒՄ Է ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի սպորտի նախարարության աջակցությամբ հոկտեմբերի 23-26-ն անցկացվում է «Թանգարանային պրոֆեսիոնալիզմը եւ էթիկան դժվարին ժամանակներում» խորագրով միջազգային բառորյա գիտաժողովը:

Գիտաժողովը կազմակերպվել է «Թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՄ) անձնակազմի վերապատրաստման միջազգային կոմիտեի» (ԻՔԹՕՓ), էթիկայի դիլեմաների միջազգային կոմիտեի (ԱՅՍԻ ԷԹԻՔՍ), ԻԿՕՄ-ի Հայաստանի ազգային կոմիտեի, Հայաստանի պատմության թանգարանի համագործակցությամբ:

Գիտաժողովի պաշտոնական բացմանը ողջույնի խոսքով հանդես է եկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը:

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ Ալֆրեդ Քոչարյանն անդրադարձել է գիտաժողովի խորագրին՝ ընդգծելով պրոֆեսիոնալիզմի եւ էթիկայի կարեւորությունը հատկապես դժվարին ժամանակներում, երբ թանգարանային ոլորտը բախվում է տարբեր մարտահրավերների: Նրա դիտարկմամբ՝ միշտ չէ, որ այդ դժվարությունները պայմանավորված են տնտեսական բաղադրիչով: Նախարարի տեղակալն իբրեւ մարտահրավեր նշել է արդի տեխնոլոգիաների ներդրումը, ինչը ոլորտի զարգացման կարեւորագույն բաղադրիչ է, սակայն պահանջում է ժամանակ եւ համառ աշխատանք:

Թանգարանների ոլորտում իրականացրած նշանակալից իրադարձություններից նախարարի տեղակալը մատնանշել է ՀՀ անկախության օրը՝ սեպտեմբերի 21-ին, Հայաստանի պատմության թանգարանում «Մայր աստվածություն. Անահիտից Մարիամ» խորագրով ցուցադրության բացումը, որտեղ ցուցադրվում են Բրիտանական թանգարանում պահվող Անահիտ աստվածուհու բրոնզե արձանից պահպանված գլուխը եւ ձեռքը: Այս համատեքստում Ալֆրեդ Քոչարյանը հիշատակել է նաեւ Գրականության եւ արվեստի թանգարանի համագործակցությունը ֆրանսիական կողմի հետ. Ֆրանսիայի ազգային հերոս Միսաք Մանուշյանի եւ նրա կնոջ՝ Մելինե Մանուշյանի՝ Փարիզի Պանթեոնում վերահուղարկավորության արարողությունը, որին հաջորդել է Փարիզի ազգային պանթեոնում թանգարանի հավաքածուից 3 ցուցանմուշների ցուցադրությունը, Ռուսական արվեստի թանգարանի եւ «Տրետյակովյան պատկերասրահի» համագործակցությունը: Միջազգային խոշոր ծրագրերից Ալֆրեդ Քոչարյանն առանձնացրել է նաեւ Սերգեյ Փարաջանովի 100 եւ Երվանդ Քոչարի 125-ամյակներին ընդառաջ Պոմպիդուում կազմակերպված հոբելյանական ցուցադրությունները:

Գիտաժողովին մասնակցում են մասնագետներ Հայաստանից եւ 11 երկրից: Ոլորտի մասնագետները հանդես կգան զեկուցումներով, տեղի կունենան ԻԿՕՄ-ի՝ համատեղ տարեկան գիտաժողովները՝ ընդունված ձեւաչափերով մասնագիտական քննարկումներ եւ հանդիպումներ:

Գիտաժողովի գլխավոր զեկուցողներն են պատմական գիտությունների դոկտոր Համլետ Պետրոսյանը, Բարսելոնայի համալսարանի մշակութային կառավարման ծրագրի տնօրեն, պրոֆեսոր Լուիս Բոնեթը, գերմանացի էթնոլոգ, հետազոտող դոկտոր Քեթրին Փաբսթը: Բանախոսները ընդարձակ զեկույցներ կներկայացնեն պատերազմական կամ այլ դժվարին պայմաններում թանգարանների առջեւ ծառացող հիմնախնդիրների վերաբերյալ: Գիտաժողովի երրորդ օրը Երեւանի պետական համալսարանում ուսանողների համար նախատեսված են հատուկ սեմինարներ, որոնք կվարեն ԻԿՕՄ ԻՔԹՕՓ-ի եւ ԻԿՕՄ ԱՅՍԻ ԷԹԻՔՍԻ խորհրդի անդամները: Գիտաժողովին մասնակցությունը նախապես գրանցումով է:

Գիտաժողովի իրականացմանն աջակցել են նաեւ Երեւանի պետական համալսարանը, Երեւանի կոնյակի գործարանի «Արարատ» թանգարանը:

ՀՀ ԿԳՄՄՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ

Աշխարհի առաջատար զբոսաշրջային լրատվամիջոցներից մեկը՝ «Lonely Planet»-ը, «Լավագույն ճանապարհորդություն 2025» թողարկման մեջ ճանաչել է Հայաստանը զբոսաշրջային լավագույն ուղղություններից մեկը:

Այս մասին հայտնում են ՀՀ զբոսաշրջության կոմիտեից՝ նշելով, որ այս ճանաչումը վկայում է այն բացառիկ հմայքի եւ հյուրընկալության մասին, որն առաջարկում է Հայաստանն իր տպավորիչ բնապատկերներով, կենսունակ մշակույթով եւ անմոռանալի փորձառություններով:

«Մեզ համար պատիվ է «Lonely Planet»-ի կողմից ճանաչվել 2025 թվականի պարտադիր այցելության ուղղություններից մեկը»,- ասել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի ղեկավարի պաշտոնակատար Սուսաննա Հակոբյանը:

Նրա խոսքով՝ այս ճանաչումն ընդգծում է այն եզակի հմայքը, պատմությունը եւ հյուրընկալությունը, որոնք առանձնահատուկ են դարձնում Հայաստանը:

«Անկախ նրանից, դրանք մեր աշխույժ քաղաքներն են, գեղատեսիլ գյուղերը, թե տեղական ավանդույթները՝ Հայաստանը յուրաքանչյուր ճանապարհորդի համար կարող է դառնալ յուրօրինակ բացահայտում», - ընդգծել է նա:

ԻՆՉ ԱՐԺԵՆ ԵՐԵՎԱՆ–ՄՈՍԿՎԱ ԱՎԻԱՑՈՒՄՍԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթն այս անգամ կրկին անդրադարձել է Երեւան-Մոսկվա թռիչքի ավիատոմսերի արժեքին:

Այսպիսով՝ հոկտեմբերի 25-ին FlyOne ավիաընկերությունը 3 ժամ ուղիղ թռիչքի համար առաջարկում է ավիատոմս, որի արժեքը 62.020 դրամ է, UralAirlines ավիաընկերությունում 3 ժամ 15 րոպե ուղիղ թռիչը՝ 64.160 դրամ: Super Kassa-ում 3 ժամ 50 րոպե թռիչքի արժեքը 69.950 դրամ է:

Հաջորդ օրը՝հոկտեմբերի 26-ին, FlyOne ավիաընկերությունում 3 ժամ 10 րոպե ուղիղ թռիչքը կարժենա 62.000 դրամ, մեկ այլ ավիատոմս նույն ընկերությունում արժե 66.300 դրամ: Azimuth-ում 3 ժամ 30 րոպե ուղիղ թռիչքը 71.870 դրամ է:

Հոկտեմբերի 27-ին Super Kassa-ում 3 ժամ 50 րոպե ուղիղ թռիչքը արժե 88.550 դրամ է, Trip.com-ում 3 ժամ 45 րոպե թռիչքն արժե 89.090 դրամ:

Երկուշաբթի օրը՝ հոկտեմբերի 28-ին, ավիատոմսերի արժեքը գրեթե չի տարբերվում: FlyOne ավիաընկերությունում 3 ժամ 10 րոպե ուղիղ թռիչքը արժե 70.500 դրամ, իսկ Azimuth ավիաընկերությունում 3 ժամ 30 րոպե ուղիղ թռիչքը արժե 71.800 դրամ:

Հոկտեմբերի 29-ին Super Kassa-ում թռիչքն արժե 90.100 դրամ, իսկ Azimuth-ում 13 ժամ ոչ ուղիղ թռիչքը՝96.000 դրամ:

Մինչեւ ամսվա վերջ տոմսերի արժեքը շարունակվում է տատանվել 62.000-ից մինչեւ 90.000 դրամի սահմաններում:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 16 պատահար. 2 մարդ զոհվել է, 21-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԺԱՄԿԵՏԸ 2 ԱՄՍՈՎ ԵՐԿԱՐԵՑՎԵՑ

Կառավարությունն իր երեկվա՝ հոկտեմբերի 24-ի նիստում որոշեց 2 ամսով երկարաձգել «Լիդիան Արմենիա» ընկերության 12,5 տոկոս բաժնետոմսերի՝ կառավարությանը նվիրատվության պայմանագիր կնքելու ժամկետը:

Հիմնավորման մեջ նշվում է, որ դեռեւս այս տարվա հունվարի 18-ին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Որպես նվիրատվություն բաժնետոմսեր ընդունելու» որոշումը:

Համաձայն որոշման՝ Հայաստանի Հանրապետությանը, որպես նվիրատվություն, «Լիդիան Ռիսորսիզ Արմենիա Լիմիթեդ» բաժնետիրական ընկերությունից նախատեսվում է ընդունել ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող «Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական 100 տոկոս 5 հազար դրամ անվանական արժեքով հասարակ բաժնետոմսերից 12.5%-ին համարժեք՝ 12503 հատ ընդհանուր թվով բաժնետոմսերը, եւ դրանց կառավարման լիազորությունը վերապահվում է էկոնոմիկայի նախարարությանը:

«Միաժամանակ, որոշման 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին հանձնարարված էր մեկամսյա ժամկետում «Լիդիան Ռիսորսիզ Արմենիա Լիմիթեդ» բաժնետիրական ընկերության հետ համատեղ սահմանված կարգով ապահովել Որոշմամբ նախատեսված բաժնետոմսերի նվիրատվության պայմանագրի կնքումը:

Հարկ է նշել, որ մինչեւ 2024 թվականի նոյեմբերի 1-ը նախատեսված էր որոշմամբ սահմանված բաժնետոմսերի նվիրատվության պայմանագրի կնքումը, սակայն գործընթացում առաջացած տեխնիկական խնդիրների պատճառով պայմանագրի կնքումը նշված ժամկետում չի իրականացվի:

Հաշվի առնելով վերագրյալը՝ նախագծով առաջարկվում է պայմանագրի կնքման ժամկետը երկարաձգել մինչեւ 2024 թվականի դեկտեմբերի30-ը»:

ՏԿԵՆ ԲԵՆԶԻՆԸ ԿՀԵՐԻՔԻ ՄԻՆՉԵՎ ԱՄՍՎԱ ՎԵՐՋ

Կառավարությունը որոշեց ՏԿԵ նախարարությանը հատկացնել 2,9 մլն դրամ՝ նախարարության բնականոն գործունեությունը ապահովելու նպատակով:

Հիմնավորման մեջ նշվում է, որ 2024-ին ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության կողմից ձեռք է բերվել 15,490 լիտր բենզին, որը նախատեսված է եղել օգտագործել ամբողջ 2024 թվականին, սակայն նախարարության վերահսկողական գործառույթներով եւ աղետի գոտի հաճախակի այցերով պայմանավորված՝ գործուղումների թիվը կանխատեսվածից ավելացել է եւ ձեռք բերված բենզինը չի բավարարում նախարարության բնականոն գործունեությունը ապահովելու համար: Այս պահին ՏԿԵ նախարությունում առկա է ընդամենը 620 լիտր բենզին, որը կբավարարի առավելագույնը մինչեւ հոկտեմբերի վերջ:

ՈՐ ԴԵՊՔՈՒՄ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՏՐՎԻ

«ԸՆԴԱՄԵՆԸ 3 ՄԻԼԻՈՆ ԴՐ. ՆԵՐԴՐՈՒՄ ՊԻՏԻ ԱՆԵՆ», ՊԱՊՈՅԱՆ

Կառավարությունն իր երեկվա՝ հոկտեմբերի 24-ի նիստում հաստատեց նախագիծը, որով աջակցություն է տրվում կարկտի առավել ակտիվ գոտիներում գյուղատնտեսական գործունեություն ծավալող գյուղացիներին:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը նշեց, որ նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է կարկտի առավել ակտիվ գոտիներում գտնվող բնակավայրերում գործունեություն իրականացնող տնտեսվարողների համար վնասների նվազեցման, տնտեսվարողների եկամուտների կայունացման ու բնակլիմայական ռիսկերի մեղմման ծրագրով սահմանված որոշ դրույթների հստակեցմամբ, ինչպես նաեւ աջակցող դրույթների ավելացմամբ:

«ՀՀ վարչապետի մարզային այցերի ընթացքում բազմիցս բարձրաձայնվել է սա, խնդիրը ձեւակերպվել է նախարարության առաջ այդ այցելությունների արդյունքում, որպես արձագանք այս նախագիծն ենք ներկայացնում: Աշխատել ենք Հիդրոմետի հետ, 270 բնակավայր է առանձնացվել առավել ակտիվ գոտիների, բոլոր այդ բնակավայրերում ոչ ինտենսիվ այգեգործությամբ են զբաղվում. այնտեղ, որտեղ կարող էր աճել դեղձ, սալոր, կարող էին ստանալ մեծ եկամուտ, ցորեն են մշակում:

Այս բնակավայրերում տարվա ընթացքում մի քանի անգամ աղետաբեր կարկուտ է լինում, միակ լուծումն այդ ցանցերն են: Հուսով ենք՝ քաղաքացիները, ոչ շատ մեծ ներդրումներ իրականացնելով, կորնգանի կամ ցորենի, գարու արտերը կվերածեն սալորի կամ խաղողի այգու, որտեղ հարյուրապատիկ շատ եկամուտ կա:

Մեր հաշվարկով՝ 12,1 միլիոն դրամ է կազմում կարկտապաշտպան ցանցը մեկ հեկտարի հաշվով կառուցելը, այս բնակավայրերում մենք փոխհատուցում ենք 75 տոկոսը. ընդամենը 3 միլիոն դրամի ներդրում պիտի անի գյուղացին»,- ասաց նա: Նախարարը նշեց, որ իրենք շատ են կարեւորում այս նախագիծը. դա հնարավորություն կտա նաեւ այն բնակավայրերում, որտեղ զբաղվածության մակարդակը ցածր է լինում, աղքատության մակարդակը՝ բարձր, բնակչության կենսամակարդակի էական աճ արձանագրել:

Նա ներկայացրեց նաեւ ծրագրի իրականացման ընթացակարգը, այն է՝ փոխհատուցման գործընթացը նախաձեռնում են շահառուները մինչեւ կապալառուի հետ պայմանագիր կնքելը եւ կարկտապաշտպան ցանցի ներդրման աշխատանքները սկսելը, դիմում են նախարարություն, նշում հողատարածքի տեղը, չափը, կցում փաստաթղթեր, տասնհինգ օրում իրականացվում է տեղազննություն, կազմվում արձանագրություն, դրական եզրակացության դեպքում շահառուի հետ կնքվում է պայմանագիր:

ՀՀ կառավարություն

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ 2 ԾՐԱԳԻՐ

Շիրակի մարզի Ամասիա համայնքում 2024 թվականին պետություն-համայնք համատեղ ներդրմամբ մեկնարկել է սուբվենցիոն 2 ծրագիր՝ 11 ենթածրագրերով՝ 161 մլն 856 հազար դրամ, ընդհանուր արժողությամբ: ՀՀ Կառավարության համամասնությունը կազմում է 64,3 տոկոս՝ 103 մլն 999 հազար դրամ, հայտնում է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը:

Խմելու ջրամատակարարման, ինչպես նաեւ ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում՝

- Ամասիա բնակավայրի Հայասա թաղամասի խմելու ջրագծի վերանորոգման աշխատանքները գտնվում են մրցութային փուլում, իսկ Բերդաշեն բնակավայրի խմելու ջրագծի վերանորոգման աշխատանքները՝ ավարտական փուլում:
- Բնակավայրերի խմելու ջրագծերի վերանորոգման ծրագրի նախահաշվային արժեքը կազմում է 99.9 մլն դրամ, Կառավարությունը տրամադրելու է գումարի 70 տոկոսը, համայնքի համամասնությունը 30 տոկոս է:
- Ծրագրից կօգտվի 724 շահառու, վերանորոգվելու է 1500 մ երկարությամբ խմելու ջրագիծ:

Փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում՝

- Բյուրակն, Բանդիվան, Ջորակերտ, Ծաղկուտ, Շաղիկ, Աղվորիկ, Արեգնադեմ, Գտաշեն եւ Մեղրաշատ բնակավայրերում փողոցային լուսավորության անցկացման շինարարական աշխատանքները գտնվում են ընթացիկ փուլում:
- Բնակավայրերի փողոցների լուսավորության անցկացման նախահաշվային արժեքը կազմում է 62 մլն դրամ, գումարի 55 տոկոսը Կառավարությունն է հատկացնելու, համայնքի համամասնությունը 45 տոկոս է:
- Ծրագրի արդյունքում տեղադրվում են 385 հենասյուներ՝ լուսատուներով, որոնց երկարությունը կազմում է 11.6 կմ:

Ամասիա համայնքի Հողմիկ բնակավայրում այս պահին ավարտական փուլում են 2023 թվականի սուբվենցիոն ծրագրով հաստատված մշակույթի տան վերանորոգման շինարարական աշխատանքները:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 79,8 մլն դրամ, Կառավարության համամասնությունը կազմել է 45 տոկոս, համայնքի համամասնությունը՝ 55 տոկոս: Ծրագրի արդյունքում վերանորոգվել է 490 քմ մակերեսով մշակույթի տունը:

ՈՐ ԿԱՅՔԵՐԸ ՊԵՏՔ Է ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԵՆ

ՀՀ կառավարությունն իր երեկվա՝ հոկտեմբերի 24-ի նիստում որոշում ընդունվեց օտարերկրյա պետություններում կազմակերպված եւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կազմակերպած ինտերնետ շահումով խաղերին, վիճակախաղերին մասնակցության հնարավորության եւ հասանելիության արգելափակման դեպքերը, կարգը եւ կայքերի արգելափակման կարգը, ժամկետները եւ արգելափակման ենթակա կայքեր բացահայտող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունների տրման կարգը սահմանելու մասին:

ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը զեկուցեց. «Սրանով մենք գործարկում ենք համակարգը, որով կայքերի հասանելիությունն ենք սահմանափակելու, բանկային դրամապանակների ցանկն ենք հրապարակելու, որոնք արգելափակվելու են, եւ այդ դրամապանակներին փոխանցումներ կատարելու հնարավորությունն է սահմանափակվելու բանկերի կողմից:

ՀՀ-ում գործող եւ մեր կարգավորման ներքո գործող շահումով խաղեր կազմակերպողները գտնվում են մեր կարգավորումների եւ վերահսկողության ներքո եւ ենթարկվում են այն պահանջներին, որ մենք սահմանել ենք՝ պաշտպանելու ՀՀ քաղաքացիներին շահումով խաղերի հետ կապված ռիսկերից: Այս ռիսկերը կառավարելու համար օտարերկրյա պետություններում գործող կայքերը, որ դուրս են մեր կարգավորումների շրջանակից, պետք է սահմանափակվեն»:

ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանն արձագանքեց՝ մեկ օրում եւ միանգամից ամեն ինչ չէ, որ տեխնիկապես հնարավոր է իրագործել, պետք է հետեւողական լինել:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԹԱՏՐՈՆԻ «ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ»

Երեւանի օպերայի եւ բալետի թատրոնի պատմությունը սկիզբ է առնում 1930-ականների սկզբին, երբ սկսվեց հայկական օպերային արվեստի զարգացումը, սակայն այն պաշտոնապես բացվել է 1933 թվականի մայիսի 20-ին՝ առաջին ներկայացում «Դավիթ բեկ» օպերայի ցուցադրությամբ, որը գրել էր օպերայի հիմնադիրներից մեկը՝ Արամ Խաչատրյանը:

Թատրոնի ստեղծման նպատակը հայկական մշակույթի պահպանումն ու զարգացումն էր, ինչպես նաեւ ազգային օպերային արվեստի ստեղծումը: Թատրոնը շատ արագ դարձավ մշակութային կենտրոն, որտեղ ներկայացվում էին ոչ միայն հայկական, այլ նաեւ միջազգային բալետային ու օպերային բեմադրություններ:

Երեւանի օպերայի եւ բալետի թատրոնի հիմնասյուներից էին մի շարք նշանավոր արվեստագետներ, որոնք իրենց ներդրումն ունեն թատրոնի զարգացման գործում:

Արամ Խաչատրյանը՝ օպերայի կոմպոզիտոր, դիրիժոր, որի ստեղծագործությունները, ներառյալ՝ «Դավիթ բեկ» եւ «Գայանե» օպերաները, դարձել են հայ օպերայի եւ բալետի առանցքային գործեր: Դանիել Աթաբեկյանը առաջին բալետմայստերն էր, ով մեծ ներդրում ունեցավ բալետի զարգացման գործում:

Երեւանի օպերայի եւ բալետի թատրոնը միշտ առանձնացել է արտիստների բարձր ստանդարտներով: Խոսելով արտիստների մասին՝ անհնար է չնշել, որ նրանք լավագույններից են հայ մշակույթի պատմության մեջ: Ամենահայտնի արտիստներից են Լուսինե Ջաքարյանը՝ հայ լավագույն սոպրանոներից մեկը, անվանի տենոր Սերգեյ Ալեքսանյանը, բալետի նշանավոր պարուհի Գոհար Գաբրիելյանը:

Այս արվեստագետները մեծ դեր են ունեցել թատրոնի պատմության մեջ եւ իրենց բացառիկ տաղանդով անմոռանալի կերպարներ են կերտել հանդիսատեսի համար:

Երեւանի օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնի ամենահայտնի ներկայացումներից են «Դավիթ բեկ» օպերան (Արամ Խաչատրյան), որը հայկական օպերայի հիմնաքարերից մեկն է. պրեմիերան տեղի է ունեցել 1933 թվականին, լավագույն նմուշներն են «Գայանե» (Արամ Խաչատրյան) հայտնի բալետը, որն ընդգրկում է հայկական մշակույթի տարրեր եւ ունի տպավորիչ երաժշտություն, «Արշակ 2-րդ» (Արամ Խաչատրյան) օպերան: Այն մեծ ճանաչում է ձեռք բերել նաեւ արտահայաստանյան օպերային կյանքում:

Հայտնի ներկայացումներից է «Բալետը երեք մասում»-ը, որը կազմված է տարբեր բալետային ներկայացումներից, որոնք հիմնված են հայկական ազգային մշակույթի վրա, եւ բոլոր ժամանակների հայտնի «Կարմեն» օպերան (Ժորժ Բիզե)՝ միջազգային ճանաչում ունեցող օպերա, որը բեմադրվել է նաեւ Երեւանում:

Այս ներկայացումները ոչ միայն մեծ ակնածանքի են արժանացել, այլեւ նպաստել են թատրոնի միջազգային ճանաչմանը՝ հնարավորություն տալով ներկայացնելու հայկական արվեստը տարբեր երկրներում եւ փառատոներում: Թատրոնը դարձել է մշակութային մի կենտրոն, որտեղ այցելում է ինչպես տեղացի, այնպես էլ օտարերկրյա հանդիսատեսը:

Երեւանի օպերայի եւ բալետի թատրոնը ներկայումս առաջարկում է մի շարք հայտնի ներկայացումներ, որոնք ներառում են ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից բալետներ ու օպերաներ:

Թատրոնի այցելուների քանակը տարբեր է՝ կախված ներկայացումից, սեզոնից եւ արտիստների մասնակցությունից: Միջին հաշվով, տարին ավելի քան 100,000 այցելու կարող է գալ թատրոն:

Թատրոնը շարունակում է լինել մշակութային կարեւոր կենտրոն, որտեղ ներկայացվում են ինչպես ազգային, այնպես էլ միջազգային աստիճանի եւ ճանաչելիության ներկայացումներ:

Այսօր Երեւանի օպերայի եւ բալետի թատրոնը հանդիսանում է Հայաստանի մշակույթի կարեւորագույն հաստատություններից մեկը եւ խաղում է մեծ դեր հայկական արվեստի տարածման գործում:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ՝ Voice of Turan –Ի ՀԱՂԹՈՂ

Սյուզաննա Մելքոնյանը հաղթել է Voice of Turan երգի միջազգային մրցույթում: Այս մասին տեղեկանում ենք երգչուհու ինստագրամյան էջից:

«Հայաստանը հաղթող ճանաչվեց Ղազախատանի Հանրապետության Թուրքեստան քաղաքում անցկացվող՝ Voice of Turan երգի միջազգային մրցույթում»,- գրել է նա: Մրցույթն անցկացվել է հինգերորդ անգամ: Մասնակցել են 18-35 տարեկան կատարողներ Ղրղզստանից, Ուզբեկստանից, Թաթարստանից,Ադրբեջանից, Վրաստանից, Բելառուսից, Հայաստանից, Կիպրոսից, Թուրքիայից, Բուլղարիայից, Կոսովոյից, Ինդոնեզիայից, Իսպանիայից, Կուբայից, Վենեսուելայից եւ այլ երկրներից: Ընտրվել են այն երգիչները, ովքեր հաջողությունների են հասել միջազգային մրցույթներում:

Ս. ՍՄԲԱՏՅԱՆԸ ՀԱՄԵՐԳՆԵՐՈՎ ՀԱՆԴԵՍ ԿԳԱ ՍԵՐԲԻԱՅՈՒՄ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր, Մալթայի ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր եւ ընթացիկ համերգաշրջանում Բեռլինի սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր հրավիրյալ դիրիժոր Սերգեյ Սմբատյանը հոկտեմբերի 24-ին եւ 26-ին ելույթ կունենա Սերբիայում անցկացվող Bemus եւ Nomus երաժշտական փառատոների շրջանակներում:

Մաեստրո Սմբատյանը կղեկավարի Վոյվոդինայի սիմֆոնիկ նվագախումբը: Համերգները կազմակերպվել են Բելգրադի փառատոների կենտրոնի եւ Almazian Productions ընկերության կողմից եւ անցկացվում են Սերբիայում Հայաստանի դեսպանության բարձր հովանու ներքո:

Համերգային երեկոների ընթացքում կհնչեն Սերգեյ Ռախմանինովի Դաշնամուրի թիվ երրորդ կոնցերտը եւ Դմիտրի Շոստակովիչի տասներորդ սիմֆոնիան:

Դասական երաժշտության այս գլուխգործոցները կներկայացվեն դիրիժոր Սերգեյ Սմբատյանի մեկնաբանմամբ: Նա աշխարհում հայտնի է որպես տարբեր կրթական եւ բարեգործական նախագծերի միջոցով դասական երաժշտությունը հանրահռչակող արտիստ, ում առանձնահատուկ ձեռնարկումներից են Ջոն Մալկովիչի հետ կյանքի կոչված նախագծերը, ինչպես նաեւ աշխարհահռչակ կոմպոզիտորներ Քշիշտոֆ Պենդերեցկու, Տիգրան Մանսուրյանի, Արվո Պյարտի, Գիա Կանչելիի եւ այլ հեղինակների հետ համագործակցությունը:

Նա ղեկավարել է Լոնդոնի սիմֆոնիկ նվագախումբը, Վարշավայի, Դրեզդենի, Իսրայելի ֆիլհարմոնիկ նվագախմբերը, Պրահայի ռադիոյի սիմֆոնիկ, Մարիինյան թատրոնի ու բազմաթիվ այլ նվագախմբեր:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՂԹԱՆԱԿ՝ ԹԵՆԻՍՈՒՄ

Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստ Կարեն Խաչանովը հաղթանակով է մեկնարկել Վիեննայի բաց մրցաշարը:

Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում մեկնարկած «Vienna Open»-ի անդրանիկ մրցափուլում Կարեն Խաչանովը մրցել է աշխարհի 78-րդ ռակետ, Բրազիլիայի ներկայացուցիչ Տյագու Ուայդի հետ: Մոտ 1,5 ժամ ձգված մրցախաղում Խաչանովը հաղթանակ տոնեց երկու սեթում՝ 6:2, 6:4 հաշվով:

Կարեն Խաչանովը պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի (ATP) վարկանիշային աղյուսակում 24-րդն է: Նա 4 անգամ հաղթել է միջազգային ֆեդերացիայի հովանու ներքո անցկացվող մրցաշարում: Նա Տոկիոյի 32-րդ ամառային Օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր է: Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստի լավագույն արդյունքը եղել է 2019 թվականին, երբ նա հասել է Rolan-Garros-ի քառորդ եզրափակիչ եւ 2021 թվականին՝ դարձյալ քառորդ եզրափակիչ Ուիմբլդոնում, իսկ 2022-ին նա հասավ US Open-ի կիսաեզրափակիչ: 2023 թվականին էլ Խաչանովը դուրս մնաց AusOpen-ի կիսաեզրափակչից:

ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԽՃԱՆԿԱՐ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության՝ Պրեմիեր լիգայի 12-րդ տուրի մրցումային վերջին օրը կայացավ երկու հանդիպում:

«Ալաշկերտ»-ն արտագնա խաղում առավելության հասավ «Գանձասար»-ի նկատմամբ: «Ալաշկերտ»-ի կազմում միակ գնդակը խփեց Պետրոս Ավետիսյանը:

Օրվա մյուս խաղում «Փյունիկ»-ը, հյուրընկալվելով ԲԿՄԱ-ին, հաղթանակ տոնեց 1:2 հաշվով: «Փյունիկ»-ի կազմում դուբլի հեղինակ դարձավ Յուսուֆ Օտուբանջոն, իսկ ԲԿՄԱ-ից հեղինակության գնդակը խփեց Արգիշտի Պետրոսյանը:

22 միավորով «Փյունիկն» այժմ մրցաշարային աղյուսակում երրորդ տեղում է: Գործող չեմպիոնը երկու միավոր է զիջում «Արարատ-Արմենիային» եւ չորսով՝ «Ուրարտուին»:

«ՌԵԱԼԸ» ԼՈՒՐՋ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ ՈՒՆԻ ԷԼ ԿԼԱՍԻԿՈՅԻՑ ԱՌԱՋ

Մադրիդի «Ռեալի» դարպասապահ Տիբո Կուրտուան չի մասնացկելու «Բարսելոնայի» հետ հանդիպմանը:

Բելգիացին ձախ ազդրի մկանի վնասվածք է ստացել: The Athletic-ի համաձայն՝ Կուրտուան բաց կթողնի 2-3 շաբաթ:

«Էլ կլասիկոն» կայանալու է հոկտեմբերի 26-ին: Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ հանդիպումը վնասվածքի պատճառով բաց է թողնելու նաեւ բրազիլացի հարձակվող Ռոդրիգոն:

● Նոյեմբերի 12-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Կեսարի խրախճանքը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Գործատուս պահանջում է ազատվելու դիմում գրել ու չի թողնում, որ աշխատեմ. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Ռոզա Վարդանյան (21 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե գործատուն առանց պատճառաբանության ցանկանում է ազատել Ձեզ աշխատանքից, իսկ Դուք չեք ցանկանում, ապա աշխատանքից ազատվելու դիմում չգրելը Ձեր իրավունքն է, եւ գործատուն իրավունք չունի հարկադրելու Ձեզ ազատվել աշխատանքից: Եվ եթե ցանկանում է ազատել Ձեզ աշխատանքից իր նախաձեռնությամբ, ապա օրենքը հստակ սահմանում է այդ դեպքերի սպառիչ ցանկը, որոնց դեպքում գործատուն պետք է նախապես ծանուցի աշխատողին կամ գրավոր բա-ցատրություն վերցնի աշխատողից, երբ ցանկանում է աշխատողին ազատել աշխատանքից ինչ-որ խախտումների պատճառով: Իսկ այն դեպքում, երբ գործատուն արգելում է Ձեզ ներկայանալ աշխատանքի եւ կատարել Ձեր աշխատանքային պարտականությունները, ապա Դուք իրավունք ունեք պահանջել գործատուից վճարել Ձեզ այն օրերի համար, որոնց ժամանակ Դուք չեք կարողացել աշխատել, ինչպես նաեւ պահանջել վճարել Ձեզ պատճառված վնասները:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետք է նկատի ունենալ, որ նման իրավիճակում պետք է ինքներդ Ձեզ ապահովագրեք հնարավոր բացասական իրավիճակներից, երբ, օրինակ, գործատուն կփորձի Ձեր՝ աշխատանքի չներկայանալը ներկայացնել որպես պատճառ Ձեզ աշխատանքից ազատելու համար: Դա կանխելու համար անհրաժեշտ է հնարավորինս շուտ գործատուին ուղարկել դիմում, որով կխնդրենք պարզաբանել, թե ինչու նա չի թույլատրում աշխատանքի ներկայանալ, արդյոք նա ազատել է Ձեզ աշխատանքից, թե ոչ: Դիմումը անհրաժեշտ է ուղարկել փոստային ծառայությամբ՝ հետադարձ ծանուցմամբ, որպեսզի հետագայում կարողանաք հիմնավորել, որ Ձեր դիմումը գործատուն ստացել է: Այս քայլը Ձեզ հնարավորություն կտա հետագայում, երբ վեճ առաջանա Ձեր եւ գործատուի միջեւ, փաստաթղթային տարբերակով հիմնավորել եւ ապացուցել, որ հենց գործատուն է խոչընդոտել Ձեր՝ աշխատանքի ներկայանալուն:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե որքան եմ պարտք բանկին, բայց ինձ ուղղորդում են իրավաբանների մոտ: Ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Սեդա Հայրապետյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նման դեպքում կարող եք հետեւել բանկի տվյալ աշխատակցի ուղղորդմանը եւ այցելել այն բանկ, որտեղ առկա են Ձեր պարտավորությունների վերաբերյալ ամբողջական տվյալներ: Եթե բանկից առհասարակ հրաժարվում են Ձեր պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ տրամադրել, ապա կարող եք ձեռնարկել հետեւյալ քայլերից որեւէ մեկը՝

-դիմել ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ՝ներկայացնելով Ձեր խնդիրը բանկի հետ, եւ խնդրել նրանց միջամտությունը: Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի ծառայություններն անվճար են:

-Այցելել «ԱՌՔԱ» վարկային բյուրոյի կայքը եւ գրանցվել կայքում: Կայքում գրանցվելուց հետո Դուք հնարավորություն կստանաք ցանկացած պահի մուտք գործել կայքում բացված Ձեր անձնական էջ եւ ստանալ ամբողջական տեղեկատվություն Ձեր վարկային պատմության վերաբերյալ:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քաղաքացու՝ բանկի նկատմամբ ունեցած ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է հասանելի լինել ոչ բոլոր մասնաճյուղերում, կամ ոչ բոլոր մասնաճյուղերի աշխատակիցները կարող են հասանելիություն ունենալ տվյալների այդ բազային, այդ պատճառով բանկի տվյալ մասնաճյուղի աշխատակիցը կարող է Ձեզ ուղղորդել այն մասնաճյուղ կամ այն աշխատակցի մոտ, որը տիրապետում է այդ տեղեկություններին կամ հասանելիություն ունի տվյալների համակարգին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝համացանցից

Կարեն Խաչանովը հաղթանակով է մեկնարկել Vienna Open-ում:

Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում մեկնարկած Vienna Open-ի անդրանիկ մրցափուլում Կարեն Խաչանովը մրցել է աշխարհի 78-րդ ռակետ, Բրազիլիայի ներկայացուցիչ Տյագու Ուայդի հետ: Մոտ 1,5 ժամ ձգված մրցախաղում Խաչանովը հաղթանակ տոնեց երկու սեթում՝6:2, 6:4 հաշվով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 7 +14 + 18
Կոտայքի լեռներ	+3 + 6 +13 + 15
Կոտայքի նախալեռներ	+9 + 11 +17 + 19
Գեղարքունիք	+3 + 8 +11 + 15
Լոռի	+ 3 + 7 +12 + 16
Տավուշ	+ 7 + 13 +15 + 19
Արագածոտնի լեռներ	+ 1 + 5 +12 + 15
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 11 +17 + 20

Արարատ	+ 9 + 11 +19 + 22
Արմավիր	+ 7 + 10 +19 + 22
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +12 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 11 +19 + 21
Սյունիքի հովիտներ	+ 7 + 12 +18 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 5 +15 + 18
ԼՂՀ	+ 2 + 6 +15 + 18
Երեւան	+15 + 18 + 22 + 24

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **24.10.2024**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*